



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 05/21**

04.03.2021թ.

ք. Երևան

ՀՀ վարչական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Դանիելյանի (այսուհետ՝ Դիմող), թիվ ՎԴ/5475/05/20 վարչական գործի շրջանակներում դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 17-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 17-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության (այսուհետ նաև՝ Սահմանադրություն) 29-րդ հոդվածին:

Ըստ Դիմողի՝ ՀՀ օրենսդրությունը երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք է վերապահել ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների և քրեակատարողական ծառայության օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներին՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակում չներառելով հարկային և մաքսային մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներին, որպիսի կարգավորմամբ, Դատարանի համոզմամբ, օրենսդիրը դրսևորել է տարբերակված մոտեցում մի կողմից՝ ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների և քրեակատարողական ծառայության օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների, մյուս կողմից՝ հարկային և մաքսային մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների միջև:

Նույն կարգավիճակն ունեցող անձանց հանդեպ պետք է դրսևորվի միատեսակ վերաբերմունք, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձանց միջև տարբերակված

մոտեցումն ունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, այն է՝ հետապնդում է իրավաչափ նպատակ և առկա է համամասնության ողջամիտ հարաբերակցություն կիրառված միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ ինչպես ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների և քրեակատարողական ծառայության, այնպես էլ հարկային և մաքսային մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներն ըստ էության իրականացնում են միևնույն գործառույթն ու լիազորությունները, մեծամասամբ իրականացնում են նույն տեսակի օպերատիվ-հետախուզական միջոցառումները, վերջիններս ունեն նույն կարգավիճակը, ինչ ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների և քրեակատարողական ծառայության օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցները: Մինչդեռ՝ կենսաթոշակային ապահովության հարցում հարկային և մաքսային մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների առնչությամբ ՀՀ օրենսդրությունը դրսևորել է տարբերակված մոտեցում՝ հիմքում չունենալով որևէ օբյեկտիվ և ողջամիտ արդարացում:

Վերոգրյալի հիման վրա Դիմողը կարծում է, որ սույն գործով վեճի լուծման համար կիրառելի՝ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 17-րդ հոդվածը՝ այնքանով, որքանով ի տարբերություն ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների, քրեակատարողական ծառայության օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք չի վերապահում նաև հարկային և մաքսային մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներին, հակասում է ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածին, քանի որ դրսևորվում է չարդարացված տարբերակված մոտեցում մի կողմից՝ ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների և քրեակատարողական ծառայության օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների, մյուս կողմից՝ հարկային և մաքսային

մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների միջև:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 17-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածին:

Վիճարկվող նորմի՝ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 17-րդ հոդվածի բովանդակությունը հետևյալն է.

1. Զինվորական կենսաթոշակի իրավունք ունի՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների և Հայաստանի փրկարար ծառայության (այսուհետ նաև՝ համապատասխան մարմիններ) համակարգի հրամանատարական և ոչ հրամանատարական (սպայական, ենթասպայական, շարքային) կազմի ծառայողը.

2) վարժական հավաքների կանչված զինապարտը և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցը.

3) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողը և դատական ակտերի հարկադիր կատարողը:

Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Այսպես, Օրենքը կարգավորում է պետական կենսաթոշակային ապահովության կառավարմանը և ֆինանսավորմանն առնչվող հարաբերությունները, սահմանում է պետական կենսաթոշակների տեսակները, կենսաթոշակ հաշվարկելու (վերահաշվարկելու), նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը:

Օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, համաձայն որի՝

1. Ձինվորական կենսաթոշակի իրավունք ունի՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների և Հայաստանի փրկարար ծառայության (այսուհետ նաև՝ համապատասխան մարմիններ) համակարգի հրամանատարական և ոչ հրամանատարական (սպայական, ենթասպայական, շարքային) կազմի ծառայողը, վարժական հավաքների կանչված զինապարտը և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողը և դատական ակտերի հարկադիր կատարողը:

Իսկ Օրենքի 18-րդ հոդվածը սահմանում է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը, համաձայն որի՝

1. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ է նշանակվում համապատասխան մարմիններում, ինչպես նաև քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություններում ծառայությունը կարգավորող օրենքներով սահմանված կարգով և ժամկետներով ծառայած այն անձին (այսուհետ՝ զինծառայող), որը՝

1) զինվորական ծառայությունից (այսուհետ նաև՝ զինծառայություն) սահմանված կարգով արձակվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ.

2) սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ կամ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ (սահմանային տարիքը լրացած լինելու դեպքում) զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որում զինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս.

3) հաստիքների կրճատման կամ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ առնվազն 45 տարեկան է և ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որում զինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս:

2. Ձինծառայողին կենսաթոշակ է նշանակվում զինծառայությունից սահմանված կարգով արձակվելու դեպքում:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեն միայն զինծառայող համարվող կամ զինծառայողին հավասարեցված կարգավիճակ ունեցող պաշտոնատար անձինք: Ուստի, վիճարկվող նորմի սահմանադրականությունը պարզելու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք հարկային և մաքսային մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների աշխատանքային գործունեությունը համարվում է զինվորական ծառայություն կամ հավասարեցված է արդյո՞ք դրան:

«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Ոստիկանության ծառայող է համարվում Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով ծառայում է ոստիկանությունում, տվել է ոստիկանության ծառայողի երդում, զբաղեցնում է սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված որևէ խմբի պաշտոն և ունի ոստիկանության կամ զինվորական կոչում կամ սույն օրենքով սահմանված կարգով գտնվում է ոստիկանության կադրերի ռեզերվում կամ կադրերի գործող ռեզերվում:

Ոստիկանության ծառայող են համարվում նաև Ոստիկանության ուսումնական հաստատությունում պետական պատվերի շրջանակներում սովորող (այսուհետ՝ սովորող), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություն Ոստիկանության կողմից գործուղված առկա ուսուցման ձևով սովորող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: ...

2. Ոստիկանության ծառայողը պետական ծառայող է:

Նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Ոստիկանությունում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության մինչև 30 տարեկան այն քաղաքացին, ով անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի քաղաքացիների և սույն օրենքի 14-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված դեպքերի), տիրապետում է հայերենին, իր գործնական, անձնական, բարոյական հատկանիշներով, կրթությամբ, առողջական վիճակով և ֆիզիկական պատրաստականությամբ ունակ է կատարելու ոստիկանության ծառայողի պարտականությունները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) զինվորական ծառայություն է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

Նույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Ազգային անվտանգության մարմիններում ծառայության կարող է ընդունվել Հայաստանի Հանրապետության մինչև 30 տարեկան (բացառությամբ տեղափոխվածների) այն քաղաքացին, ով անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի քաղաքացիների, բարձրագույն ուսումնական հաստատություններ ավարտած այն անձանց, ովքեր ուսման ընթացքում անցել են զինվորական պատրաստություն և հանձնել սահմանված քննությունները, ինչպես նաև «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ», «ե» կետերում, 13-րդ հոդվածում նշված և պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստացած և պահեստագործում գրանցված անձանց), տիրապետում է հայերենին, իր գործնական, անձնական, բարոյական հատկանիշներով, կրթությամբ, առողջական վիճակով և ֆիզիկական պատրաստականությամբ ունակ է կատարելու ազգային անվտանգության մարմինների ծառայողի պարտականությունները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

«Քրեակատարողական ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

3. Պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոնների, քրեակատարողական և փրկարար ծառայությունների պաշտոնների միջև համապատասխանությունը սահմանում է Կառավարությունը:

Նույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Սույն օրենքով սահմանված կարգով քրեակատարողական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն քրեակատարողական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին

տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք անցել են պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնք օրենքով նախատեսված կարգով և հիմքով ազատվել են պարտադիր զինվորական ծառայությունից), դիմելու պահին չի լրացել նրանց 30 տարին, բացառությամբ սույն օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքի: Քրեակատարողական ծառայության միջին և կրտսեր խմբերի պաշտոններում կարող են նշանակվել նաև սույն հոդվածի պահանջներին համապատասխանող, սակայն դիմելու պահին օրենքով նախատեսված կարգով և հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացիները:

«Փրկարար ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝

1. Փրկարարական ծառայության ծառայող է համարվում փրկարար ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որն ունի սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կոչում ու տվել է երդում կամ սույն օրենքով սահմանված կարգով գտնվում է կադրերի ռեզերվում:

2. Փրկարարական ծառայության ծառայողը (այսուհետ՝ ծառայող) պետական ծառայող է:

Նույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Սույն օրենքով սահմանված կարգով փրկարար ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն փրկարարական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք անցել են պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի կամ այն քաղաքացիների, որոնք օրենքով նախատեսված կարգով և հիմքով ազատվել են պարտադիր զինվորական ծառայությունից), և դիմելու պահին չի լրացել վերջիններիս 35 տարին: Փրկարար ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը) փրկարար ծառայության իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող փրկարարական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող, կառավարման համակարգում

տեղակայվածությունը նախատեսող և սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ է:

«Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Սույն օրենքով սահմանված կարգով հարկադիր կատարողի պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն հարկադիր կատարման ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք անցել են պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնք օրենքով նախատեսված կարգով և հիմքով ազատվել են պարտադիր զինվորական ծառայությունից):

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Զինվորական ծառայությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում օրենքով սահմանված պետական ծառայության տեսակ է: Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձինք համարվում են զինծառայող: Օտարերկրյա պետությունների զինված ուժերում և այլ զորքերում կամ ռազմաուսումնական հաստատություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ծառայությունը կամ ուսումնառությունը, ինչպես նաև օտարերկրյա պետությունների քաղաքացիների ծառայությունը կամ ուսումնառությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում կամ ռազմաուսումնական հաստատություններում կարգավորվում են համապատասխան պայմանագրերով:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

5. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմինների համակարգերում զինվորական ծառայության հիմնական պաշտոնների, քրեակատարողական և փրկարար ծառայությունների հիմնական պաշտոնների միջև համապատասխանությունը սահմանում է Կառավարությունը:

ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «Ուստիկանության, զինված ուժերի, ազգային անվտանգության ծառայության, քրեակատարողական ծառայության,

դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, փրկարարական ծառայության, քննչական կոմիտեում ծառայության, դատախազության պաշտոնների համապատասխանությունը սահմանելու մասին» N 550-Ն որոշմամբ՝ սահմանվել է ոստիկանության, զինված ուժերի, ազգային անվտանգության ծառայության, քրեակատարողական ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, փրկարարական ծառայության, քննչական կոմիտեում ծառայության, դատախազության պաշտոնների համապատասխանության ցանկը՝ համաձայն նշված որոշման հավելվածի:

«Հարկային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝

Հարկային ծառայությունը հարկային ծառայողի կողմից սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ու իր իրավասության սահմաններում իրականացվող մասնագիտական գործունեությունն է, որը նպատակաուղղված է հարկային մարմնի խնդիրների և գործառույթների իրականացմանը և չի իրականացվում այլ հանրային ծառայողների կողմից:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Օրենքով սահմանված կարգով հարկային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն հարկային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով (նկարագրով) ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

«Մաքսային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝

Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայությունը Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների միասնական կենտրոնացված համակարգն է:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Մաքսային ծառայության պաշտոնի նշանակվելու իրավունք ունի միայն բարձրագույն կրթություն ունեցող, հայերենին տիրապետող և վերադաս մաքսային մարմնի հաստատած համապատասխան պաշտոնի նկարագրի պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության քաղաքացին:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝

Մույն օրենքով կարգավորվում են օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման բնագավառում ծագող իրավահարաբերությունները: Օրենքը սահմանում է օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը, խնդիրները, սկզբունքները, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելիս նրանց իրավունքները և պարտականությունները, օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ հսկողությունը և վերահսկողությունը:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝

1. Օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու իրավունք ունեն՝

1) ոստիկանությունը.

1.1) ռազմական ոստիկանությունը.

2) ազգային անվտանգության մարմինները.

3) հարկային մարմինները.

4) մաքսային մարմինները՝ մաքսանենգության և այլ հանցագործությունների խափանման ու բացահայտման նպատակով.

5) քրեակատարողական ծառայությունը՝ միայն քրեակատարողական հիմնարկներում:

Նույն օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝

1. Օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում կարող են անցկացվել օպերատիվ-հետախուզական հետևյալ միջոցառումները.

1) օպերատիվ հարցում.

2) օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում.

3) համեմատական հետազոտումների նմուշների հավաքում.

4) հսկիչ գնում.

5) վերահսկելի մատակարարում և գնում.

6) իրերի և փաստաթղթերի հետազոտում.

7) արտաքին դիտում.

8) ներքին դիտում.

9) անձի նույնացում.

10) շենքերի, կառույցների, տեղանքի, շինությունների և տրանսպորտային միջոցների հետազոտում.

11) նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում.

12) հեռախոսային խոսակցությունների վերահսկում.

13) օպերատիվ ներդրում.

14) օպերատիվ փորձարարություն.

15) ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում.

16) կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումները սահմանվում են միայն օրենքով:

2. Ոստիկանությունն իրավունք ունի անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները:

2.1. Ռազմական ոստիկանությունն իրավունք ունի անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ կետերով նախատեսված օպերատիվ հետախուզական միջոցառումները:

3. Ազգային անվտանգության մարմիններն իրավունք ունեն անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները:

4. Մաքսային մարմիններն իրավունք ունեն անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները:

5. Հարկային մարմիններն իրավունք ունեն անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ, 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները:

6. Քրեակատարողական ծառայության մարմիններն իրավունք ունեն անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները՝ միայն Հայաստանի Հանրապետության

արդարադատության նախարարության քրեակատարողական համակարգի նախնական կալանքի վայրերում և ուղղիչ աշխատանքային հիմնարկների տարածքներում:

Անդրադառնալով խտրականության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանը 2010 թվականի մայիսի 04-ի ՍԴՈ-881 որոշման մեջ արձանագրել է. «5. Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից: ... Իսկ ինչ վերաբերում է դասային աստիճան ունեցող դատախազների համար՝ դատախազի, դատավորի և դատախազության քննիչի պաշտոնում աշխատած տարիներից ելնելով հավելավճարի սահմանմանը, ապա դա հենց այս պաշտոնների համար նախատեսված սոցիալական անկախության երաշխիք է և որևէ առնչություն չունի Սահմանադրության 14.1-րդ հոդվածի առաջին մասով սահմանված՝ օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի հետ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ՝ տվյալ դեպքում սոցիալական անկախության երաշխիքներ նախատեսելու կամ իրավունքի տվյալ կատեգորիայի սուբյեկտների համար լրացուցիչ պարտականություններ սահմանելուն»:

2015 թվականի հոլիսի 07-ի ՍԴՈ-1224 որոշման մեջ Սահմանադրական դատարանն հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «16 ... Վերոնշյալ հարցադրումներն անհրաժեշտ է դիտարկել ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի, խտրական վերաբերմունքի մասին սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո: Այսպես. անձի նկատմամբ տարբերակված, խտրական վերաբերմունքի սահմանադրականության վերաբերյալ սահմանադրական

դատարանը հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումները. ա) ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Այս հոդվածի պահանջներին համապատասխան՝ պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները (ՄԴՈ-731, 29 հունվարի 2008 թ.), բ) սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից (ՄԴՈ-881, 4 մայիսի 2010 թ.):

...

22. Ինչ վերաբերում է տարիքային խտրականության վերաբերյալ դիմողի փաստարկներին՝ ընդհանրապես, ապա հարկ է նշել, որ խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ: Խնդրո առարկա իրավիճակում չի կարող արձանագրվել նման վիճակ, քանզի խոսքը վերաբերում է ոչ թե նույն իրավական կարգավիճակի շրջանակներում՝ տարիքով պայմանավորված խտրականությանը, այլ տարբեր իրավական կարգավիճակ ունենալու հիմքով անձանց՝ օրենքով նախատեսված իրավունքներին և պարտականություններին, այսինքն՝ իրավական հիմնավորում ունեցող օբյեկտիվ պայմաններին»:

Վերոգրյալ իրավական ակտերի վերլուծությունից պարզ է դառնում, որ ոստիկանության, ազգային անվտանգության, փրկարար ծառայության, քրեակատարողական ծառայության և հարկադիր կատարումն ապահովող

ծառայության պաշտոններում նշանակվելու պարտադիր պայման է համարվում պաշտոնի նշանակվելու համար դիմած անձի՝ **պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելը** (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի): Իսկ հարկային և մաքսային մարմիններում ծառայության անցնելու համար նման պահանջ սահմանված չէ:

Ավելին, «Զինվորական ծառայության և զինապարտության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմինների համակարգերում զինվորական ծառայության հիմնական պաշտոնների, քրեակատարողական և փրկարար ծառայությունների հիմնական պաշտոնների միջև համապատասխանությունը սահմանում է Կառավարությունը:

Ի հավելումն դրա՝ ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի N 550-Ն որոշմամբ սահմանվել է ոստիկանության, զինված ուժերի, ազգային անվտանգության ծառայության, քրեակատարողական ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, փրկարարական ծառայության, քննչական կոմիտեում ծառայության, դատախազության պաշտոնների համապատասխանության ցանկը: Նշված որոշմամբ ոստիկանության, զինված ուժերի, ազգային անվտանգության ծառայության, քրեակատարողական ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, փրկարարական ծառայության, քննչական կոմիտեում ծառայության, դատախազության պաշտոնները համապատասխանեցվել են (հավասարեցվել): Այս իրավական ակտերում ևս խոսք չկա հարկային կամ մաքսային մարմիններում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց մասին:

Այսինքն՝ ստացվում է, որ նախ՝ ՊԵԿ աշխատակիցները (այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնողները) իրենց կարգավիճակով տարբերվում են ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների և քրեակատարողական ծառայության աշխատակիցներից, բացի դա տարբերակված պահանջներ են սահմանված ՊԵԿ-ում և այդ մարմիններում պաշտոնի նշանակվելու համար, մասնավորապես՝ պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելը (բացառությամբ՝ օրենքով նախատեսված դեպքերի):

Անդրադառնալով նաև Դիմողի այն տեսակետին, որ ինչպես ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների և քրեակատարողական ծառայության, այնպես էլ հարկային և մաքսային մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներն, ըստ էության, իրականացնում են նույն տեսակի օպերատիվ-հետախուզական միջոցառումները, ապա նշենք, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված է, թե օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող որ մարմինն ինչպիսի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու իրավասություն ունի: Հարկ է ուշադրություն դարձնել, որ նշված մարմիններն ամբողջությամբ նույն (թվով 16) օպերատիվ-հետախուզական միջոցառումներն անցկացնելու իրավասություն չունեն: Յուրաքանչյուր մարմնի մասով հստակ սահմանված են օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները:

Այսինքն՝ հիմնավոր չէ այն փաստարկը, որ վիճարկվող նորմը հակասում է խտրականության արգելման սկզբունքին, քանի որ տվյալ դեպքում տարբերակումը վերաբերում է տարբեր կատեգորիայի անձանց:

Խտրականությունն առկա կլիներ այն դեպքում, երբ օրենսդրորեն հարկային և մաքսային մարմիններում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող պաշտոնատար անձինք հավասարեցված լինեին զինծառայողի կարգավիճակ ունեցող անձանց, նրանց համար աշխատանքի ընդունվելու նույն պայմաններն առաջադրված լինեին, նույն գործառնությունները և պարտականությունները կատարեին, սակայն տարբերակում նախատեսվեր «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով:

Կարծում ենք, առկա կարգավորումների պարագայում խտրականության սահմանադրական սկզբունքի խախտումը բացակայում է:

«Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 17-րդ հոդվածն ունի օբյեկտիվ հիմք, դա «Զինվորական ծառայության և զինապարտության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասն է և ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի N 550-Ն որոշումը, որով ոստիկանության, զինված ուժերի, ազգային անվտանգության ծառայության, քրեակատարողական ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, փրկարարական ծառայության, քննչական կոմիտեում

ծառայության, դատախազության պաշտոնները համապատասխանեցված են միմյանց,
իսկ ՊԵԿ-ի պաշտոնները՝ ոչ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 17-րդ հոդվածը
համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածին:

 Recoverable Signature

Համակարգող՝

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169